ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

31 հուլիսի 2017 թվականի N 115-Ա

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 5-ի N 487 որոշման 1-ին կետի «բ» ենթակետը, ինչպես նաև *Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 328-Ա որոշումը*՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար ***Լևոն Պետրոսյանին*** տրամադրել 2017 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը և լրացուցիչ արձակուրդը՝ տասը աշխատանքային օր, ինչպես նաև *պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործման ու այդպիսի գաղտնիքի պաշտպանության աշխատանքների համար լրացուցիչ վճարովի արձակուրդը*՝ հինգ աշխատանքային օր, 2017 թվականի օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ:

2. ***Լևոն Պետրոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի ղեկավարի տեղակալ *Էլզա Հովհաննիսյանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի հուլիսի 31
ք. Հրազդան